

Հաստատվել է՝  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի խորհրդի  
18.12.2019թ. թիվ 24/21-Լ որոշմամբ

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝



Արա Զորիարյան



**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**

քաղաք Երևան,  
2019թ.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) կանոնադրության 16.5, 16.29, 16.30, 23.1, 23.3, 24.4 և 24.5 կետերի պահանջների համաձայն սույն կարգը սահմանում է Փաստաբանների պալատի խորհրդի (**այսուհետ՝ Խորհուրդ**) կողմից Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական վերահսկողության հետ կապված, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործառնություններին առնչվող այլ հարաբերությունները: Սույն կարգը չի սահմանում Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հետ կապված հարաբերությունները:

2. «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված խնդիրներն իրագործելու համար Փաստաբանների պալատը մասնավորապես կատարում է՝

- 1) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված այլ վճարումների (այդ թվում՝ հարկերի և պարտադիր վճարների) ծախսեր,
- 2) կոմունալ վճարումների ծախսեր,
- 3) փոստային և հեռահաղորդակցման ծառայությունների ծախսեր,
- 4) գրասենյակային և տեղեկատվական բնույթի ծախսեր,
- 5) տրանսպորտային և ներկայացուցչական ծախսեր,
- 6) ծառայությունների գծով ծախսեր,
- 7) ապրանքանյութական պաշարների ծախսեր,
- 8) վերանորոգման աշխատանքների ծախսեր,
- 9) Փաստաբանների պալատի կառույցների և մարզային համակարգման գծով ծախսեր,
- 10) միջազգային համագործակցության ծախսեր,
- 11) ներքին ծրագրերի իրագործման ծախսեր:

## I. ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Փաստաբանների պալատի բյուջեի ուղղություններով չնախատեսված խոշոր գործարք կնքելու (կատարելու), այն է՝ Փաստաբանների պալատի գույքը վաճառելու կամ ձեռք բերելու կամ այլ գործարք կնքելու (կատարելու) դեպքում, եթե գույքի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (**այսուհետ՝ Խոշոր գործարք**), մինչև գործարքի կատարումը Փաստաբանների պալատի նախագահը պետք է նախապես ստանա Փաստաբանների պալատի խորհրդի համաձայնությունը (որոշումը): Ընդ որում, եթե խորհուրդը քննարկում է նոր գույք ձեռք բերելու համաձայնություն տալու հարց, ապա խորհրդին ֆինանսական տնօրենը ներկայացնում է համապատասխան ապրանքի գնի և/կամ տեխնիկական նկարագրի վերաբերյալ առնվազն 2 (երկու) անձից (մատակարարից) ստացված գնային առաջարկներ, բացառությամբ երբ՝ (1) առաջարկվել է կոնկրետ հատկանիշներով (գտնվելու վայր, մակնիշ և այլ) կամ (2) երկրորդական շուկայից գույք ձեռք բերելու հայտ կամ (3) գնման ենթակա գույքի հետ կապված հնարավոր չէ այլ ողջամիտ առաջարկ ստանալ կամ (4) ներկայացվել

է մեծ միջոցառում իրականացնելու հայտ, որի ընդհանուր բյուջեն գերազանցելու է մեկ միլիոն ՀՀ դրամը: Գույք ձեռք բերելու վերաբերյալ խորհրդի համաձայնության դեպքում, ֆինանսական տնօրենն իրավունք ունի առավել մատչելի տարբերակով գույք ձեռք բերել առանց խորհրդի լրացուցիչ որոշման: Եթե ներկայացվել է Փաստաբանների պալատի գույք վաճառելու հարց, ապա ֆինանսական տնօրենը խորհրդին պետք է ներկայացնի գույքի գնահատման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ: Ֆինանսական տնօրենը կարող է նաև խորհրդին ներկայացնել գնորդի մասին տեղեկություններ, եթե հավանական գնորդը հայտնի է: Սույն կետում նշված կարգը վերաբերում է նաև 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը գերազանցող ծառայություններին և աշխատանքներին:

4. Մեկ միլիոն ՀՀ դրամ ծախսը գերազանցող միջոցառում (ծրագիր, գործարք) կազմակերպելու (կատարելու) համար խորհրդի լրացուցիչ որոշում չի պահանջվում և համարվում է սույն կարգով համաձայնություն տրված, եթե՝

- 1) նշված միջոցառումը (ծրագիրը, գործարքը) նախատեսված է Փաստաբանների պալատի բյուջեով, որտեղ սահմանված է ծախսվող գումարի առավելագույն չափը, կամ
- 2) նշված միջոցառումը (ծրագիրը, գործարքը) նախատեսված է Փաստաբանների պալատին տրամադրվող դրամաշնորհային ծրագրով, կամ
- 3) նշված միջոցառումը (ծրագիրը, գործարքը) նախատեսված է Փաստաբանների պալատին տրամադրվող նվիրաբերության գործարքով:

5. Փաստաբանների պալատի խորհրդի անդամն իրավունք ունի Փաստաբանների պալատի գտնվելու վայրում (**այսուհետ՝ Գրասենյակում**) ծանոթանալ առաջարկների հիմքերին, եթե այն նախապես չի տեղադրվել Փաստաբանների պալատի խորհրդի անդամների համար նախատեսված էլեկտրոնային պահոցում (**այսուհետ՝ Էլեկտրոնային պահոց**):

6. Խորհրդի անդամն իրավունք ունի տվյալ օրակարգով խորհրդի առաջին նիստի ժամանակ ֆինանսական տնօրենի կողմից ներկայացված գնային առաջարկներին անհամաձայնություն հայտնել և առավել մատչելի և առաջարկների մեջ նշված ապրանքներին որակով չզիջող ապրանքի գնման նոր առաջարկ ներկայացնելու նախաձեռնությամբ հանդես գալ: Սույն կետում նշված նախաձեռնության մասին խորհրդի անդամի հայտարարությունը հիմք է խորհրդի նախագահի կողմից խորհրդի նիստը հետաձգելու համար: Խորհրդի հաջորդ նիստի ժամանակ, անհամաձայնություն հայտնած խորհրդի անդամը պարտավոր է ներկայացնել գնային նոր առաջարկը և դրա հիմքը (մատակարարի գրությունը): Խորհուրդը հերթական նիստի ժամանակ քննարկում է ֆինանսական տնօրենի առաջարկները, ինչպես նաև անհամաձայնություն հայտնած խորհրդի անդամի կողմից ներկայացված առաջարկը (ներկայացված լինելու դեպքում): Եթե խորհրդի անդամը օգտվել է սույն կետում նշված իրավունքից, սակայն հաջորդ նիստին չի ներկայացրել առաջարկը և դրա հիմքը, ապա մեկ տարվա ընթացքում սույն կետում նշված այլ հարցով նիստ հրավիրելու դեպքում, խորհրդի անդամի՝ ֆինանսական տնօրենի կողմից ներկայացված գնային առաջարկներին անհամաձայնություն հայտնելու և առավել մատչելի և առաջարկների մեջ նշված ապրանքներին որակով չզիջող ապրանքի գնման նոր առաջարկ ներկայացնելու նախաձեռնությամբ

հանդես գալու հիմքով նիստը հետաձգելու հարցը քննարկում է խորհուրդը:

7. Փաստաբանների պալատի բյուջեի ուղղություններով չնախատեսված խոշոր գործարք կնքելու դեպքում, Փաստաբանների պալատի բյուջեն համապատասխան մասով համարվելու է փոփոխված, բացառությամբ այն դեպքի, երբ խորհուրդը որոշել է գործարքը կատարել պահուստային ֆոնդի միջոցով:

## II. ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏ

8. Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է խորհրդի կողմից ընտրված արտաքին աուդիտ իրականացնող անձը:

9. Աուդիտորական կազմակերպությանն ընտրելու համար ֆինանսական տնօրենը ներկայացնում է առնվազն երեք աուդիտորական կազմակերպության գնային առաջարկ: Խորհրդի անդամի կողմից ներկայացված աուդիտորական կազմակերպությունների թեկնածուներին անհամաձայնություն հայտնելու դեպքում, գործում է սույն կարգի 6-րդ կետում նշված կանոնները:

10. Խորհուրդը կաշկանդված չէ աուդիտորական ծառայության գնի մատչելիության պայմանով:

11. Խորհրդի առնվազն 5 (հինգ) անդամի (**սույն կետի իմաստով՝ այսուհետ՝ նախաձեռնող խումբ**) պահանջով Խորհրդի նախագահը պարտավոր է խորհրդի օրակարգում ներառել արտահերթ աուդիտորական ստուգում կատարելու հարց: Սույն կետում նշված դեպքում, արտահերթ աուդիտորական ստուգում կատարելու հարցի հետ զուգահեռ քննարկվում է նաև աուդիտորական կազմակերպություն ընտրելու, ինչպես նաև Փաստաբանների պալատի բյուջեում աուդիտի ֆինանսավորման հարցով փոփոխություն կատարելու մասին հարցերը: Նախաձեռնող խումբը խորհրդին է ներկայացնում առնվազն երեք աուդիտորական կազմակերպությունների գնային առաջարկները: Սույն կետում նշված հարցը խորհրդի կողմից մերժվելու դեպքում, նույն հարցը կարող է ներկայացվել քննարկման առնվազն վեց ամիս հետո:

## III. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

12. Խորհրդի անդամն իրավունք ունի ծանոթանալու փաստաբանների պալատի բոլոր ֆինանսատնտեսական փաստաթղթերին, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք և առկա չէ Փաստաբանների պալատի նախագահի թույլտվությունը:

13. Փաստաբանների պալատի փաստաթղթերին ծանոթանալու համար խորհրդի անդամը գրություն է ներկայացնում ֆինանսական տնօրենին: Գրության մեջ խորհրդի անդամը պարտավոր է նշել այն փաստաթղթերը, որոնց ցանկանում է ծանոթանալ, իսկ եթե կոնկրետ փաստաթղթերը դիմողին հայտնի չեն, ապա անհրաժեշտ տեղեկությունները, որոնք կարող են հաստատվել կամ հերքվել պահանջվող փաստաթղթերով:

14. Բացառությամբ սույն կարգի 17-րդ կետում նշված դեպքի, ֆինանսական տնօրենը ստանալով խորհրդի անդամի գրությունը պարտավոր է տասնհինգ օրվա

ընթացքում պատասխանել դիմողին, հայտնելով ծանոթացման օրը, վայրը և ժամանակը, եթե առկա չէ դիմումը մերժելու որևէ հիմք: Ծանոթացման համար դիմողին պետք է տրվի ողջամիտ ժամանակահատված: Եթե խորհրդի անդամը նշանակված ժամանակահատվածում անհարգելի պատճառով չի ներկայանում փաստաթղթերին ծանոթանալու համար, ապա նույն հարցով կարող է դիմել ֆինանսական տնօրենին երեք ամիս անցնելուց հետո:

**15.** Խորհրդի անդամի՝ փաստաթղթերին ծանոթանալու մասին դիմումը կարող է մերժվել սույն կարգի 12-րդ, 13-րդ կամ 14-րդ կետում նշված դեպքում:

**16.** Խորհրդի անդամը՝ Խորհրդի նիստի ժամանակ, իր գործառույթներն իրականացնելիս կամ Պալատի նախագահի թույլտվության հիման վրա փաստաթղթերին ծանոթանալու դեպքում, պարտավոր է Փաստաբանների պալատի սկզբնական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար կազմված հաշվետվություններում պարունակվող տեղեկատվության գաղտնիությունը, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ տեղեկությունների գաղտնիությունը պահպանել: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն սույն կետում նշված տեղեկությունները համարվում են առևտրային գաղտնիք և առանց Փաստաբանների պալատի նախագահի թույլտվությամբ դրանք հրապարակելը օրենքով առաջացնում է պատասխանատվություն:

**17.** Փաստաբանների պալատի նախագահի տարեկան ֆինանսական հաշվետվությունը (Պալատի տարեկան բյուջեի կատարողականը) քննարկելու հարցը խորհրդի նիստի օրակարգում ընդգրկվելուց հետո խորհրդի անդամն իրավունք ունի մինչև նիստի անցկացումը ծանոթանալ հաշվետվության հիմքերին՝ Գրասենյակում: Ֆինանսական տնօրենն ապահովում է խորհրդի անդամի կողմից հիմքերին ծանոթանալու համար անհրաժեշտ պայմանները և հարցեր առաջանալու դեպքում խորհրդի անդամին ներկայացնում է պարզաբանումներ:

**18.** Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ Փաստաբանների պալատի նախագահից կարող է պահանջվել ներկայացնելու առանձին այն հարցերի վերաբերյալ արտահերթ հաշվետվություններ, որոնց վերաբերյալ Փաստաբանների պալատի նախագահի ներկայացրած ընթացիկ հաշվետվությունները Փաստաբանների պալատի խորհրդին չեն բավարարել:

#### **IV. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՆ**

**19.** Փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է փաստաբանների հավակնորդների մուտքավճարներից, փաստաբանների անդամավճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից:

**20.** Փաստաբանների պալատի խորհուրդը հերթական տարվա համար հաստատում է Փաստաբանների պալատի բյուջեն (առանց հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող գումարների և ծախսերի)՝ հաշվետու տարվան նախորդող տարվա վերջին եռամսյակում:

**21.** Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հերթական տարվա բյուջեն չհաստատվելու դեպքում՝ Փաստաբանների պալատը գործում է հաշվետու տարվան նախորդող տարվա բյուջեով, մինչև նոր բյուջեի հաստատումը:

**V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**22.** Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 19-ից:

**23.** Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների ձայների առնվազն 3/4-ով (առնվազն խորհրդի 10 (տաս) անդամի կողմ ձայներով):

\* \* \*